MODERN ARMENIAN

Maximum Marks: 80

Time Allowed: Three Hours

*(Candidates are allowed **additional 15 minutes** for **only** reading the paper.*
*They must **NOT** start writing during this time.)*

*Answer **all** questions.*

The intended marks for questions or parts of questions are given in brackets [ ].

Question 1 **[20]**

Write a short composition in Armenian in about 400 words on *any one* of the following topics.

Գրել արդի հայերենով կարճ շարադրություն՝ մոտ 400 բառով, հետևյալ թեմաներից մեկով:

(i) Կորցրած տարիներ

(ii) Մարդը և բնությունը

(iii) Չասված բառեր

(iv) Ամառային արձակուրդներ

Question 2 **[8]**

Choose the correct option to translate from Armenian to English.

Ընտրեք ճիշտ տարբերակը հայերենից անգլերեն թարգմանելու համար:

(i) **Ես չեմ հասկանում: Դուք անգլերեն խոսու՞մ եք:**

(a) I do not understand French. Do you speak English?

(b) I do not understand. Do you speak English?

(c) I do not understand German. Do you speak Armenian?

(d) I do not understand what you are saying. Can you translate in English?

This Paper consists of 7 printed pages and one blank page.

Turn over

© *Copyright reserved.*

(ii) **Սոված մարդը երազում է հացի մասին, իսկ ծարավ մարդը՝ ջրի:**

(a) A hungry person dreams of bread and a thirsty person dreams of water.

(b) A greedy man dreams of bread and a greedy woman dreams of water.

(c) A person always dreams of bread and water.

(d) A hungry person dreams only of bread and not water.

(iii) **Դուք ամեն շաբաթ և կիրակի ազատ եք, իսկ ձեր աշխատողները՝ ոչ:**

(a) You get every Sunday off and your employees do not.

(b) You will get this weekend off but your employees will not.

(c) You get every weekend off but your employees do not.

(d) Your employees get every weekend off but you do not.

(iv) **Քաղաքի հյուրանոցներում այլևս տեղ չկա, որ մնացած հյուրերին տեղավորեն:**

(a) There is no more room in this house to accommodate all the people.

(b) There is no room left in the city hotels to accommodate the remaining guests.

(c) There are plenty of rooms in the city hotels to accommodate the guests.

(d) There are no hotels in the village to accommodate the guests.

(v) **Ծովափի ավազների վրա, արևի տակ պառկած հանգստանում էին հարյուրավոր մարդիկ:**

(a) Hundreds of people were living on the beach.

(b) Thousands of people were relaxing on the beach, lying in the sun.

(c) Hundreds of people were relaxing on the beach, lying in the sun.

(d) Hundreds of people were relaxing on the beach.

(vi) **Տան մուտքի առջև մի փոքրիկ պարտեզ կար:**

(a) In front of the entrance to the house, was a small garden.

(b) In front of the garden, there was a small house.

(c) In front of the house, was a small garden.

(d) In front of the entrance to the house, was a small dog.

(vii) **Ինչքան հեռանում էինք գյուղից, այնքան ավելի էինք մոտենում անտառին:**

(a) The farther we went from the village, the sadder we felt.

(b) The farther we got from the village, the closer we got to the mountain.

(c) The farther we got from the city, the closer we got to the forest.

(d) The farther we got from the village, the closer we got to the forest.

(viii) **Ձմռան մի ցուրտ օր էր և տասնյակ գայլեր հավաքվել էին գյուղի անասնագոմերի մոտ:**

(a) It was a cold winter's day and the foxes had gathered near the barns of the village.

(b) It is a cold winter's day and the dogs have gathered near the cattle sheds of the village.

(c) It was not a cold winter's day, but the wolves had gathered near the cattle sheds of the village.

(d) It was a cold winter's day and the wolves had gathered near the cattle sheds of the village.

Question 3 **[12]**

Translate the following passage from Armenian to English.

Տրված տեքստը հայերենից թարգմանել անգլերեն:

Հազար չորս հարյուր հիսուներկու թվականին Իտալիայի գեղեցիկ քաղաքներից մեկի՝ Ֆլորենցիայի մոտ՝ մի փոքրիկ դղյակում, ծնվեց սևուկ աչքերով թմբլիկ մի մանչուկ: Նա հետագայում դարձավ աշխարհի լավագույն նկարիչներից մեկը: Եվ այդ հայտնի նկարիչը Լեոնարդո դա Վինչին էր:

Բոլորը նրան համարում են մեծագույն քանդակագործ և նկարիչ, բայց քչերը գիտեն, որ նա եղել է նաև մեծ ճարտարագետ: Լեոնարդո դա Վինչին մշակել է պաշտպանական զենքեր, հնարել է սուզանավի նախնական տիպը, թնդանոթ, տանկ, շարժական կամուրջներ, թռչող սարքեր:

Մեծ վարպետի նկարներից մեկը՝ Սալվատոր մունդին, 2017թ. վաճառվեց Նյու Յորքում, 450 միլիոն դոլլարով, որը մինչ օրս աշխարհում վաճառված նկարների մեջ ամենաթանկն է համարվում: Սակայն Լեոնարդո դա Վինչիի ամենահայտնի գործը եղել և մնում է Մոնա Լիզայի նկարը: Նրա նկարները պահվում են աշխարհի ամենահայտնի թանգարաններում:

Question 4 **[8]**

Choose the correct option to translate from English to Armenian.

Ընտրեք ճիշտ տարբերակը անգլերենից հայերեն թարգմանելու համար:

(i) **Nowadays we don't find a single rabbit or deer in the forest or a single fish in the lake.**

(a) Հիմա անտառում ոչ մի նապաստակ կամ գայլ չենք գտնի կամ մեկ ձուկ լճում:

(b) Վաղուց անտառում ոչ մի նապաստակ կամ եղնիկ չես գտնի կամ մեկ ձուկ լճում:

(c) Հիմա սարերում ոչ մի նապաստակ կամ եղնիկ չես գտնի կամ մեկ ձուկ լճում:

(d) Հիմա անտառում ոչ մի նապաստակ կամ եղնիկ չենք գտնի կամ մեկ ձուկ լճում:

(ii) **Circumstances are such that I cannot buy this house.**

(a) Հանգամանքներն այնպես չդասավորվեցին, որ ես կարողանամ գնել այս տունը:

(b) Հանգամանքներն այնպիսին են, որ ես չեմ կարող գնել այս տունը:

(c) Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ ես կարող եմ գնել այս տունը:

(d) Հանգամանքներն այնպիսին են, որ մենք չենք կարող գնել այս տունը:

(iii) **I got a rare photo from the studio as a memento.**

(a) Ստուդիայից որպես հուշ հազվագյուտ մի արձան ստացա:

(b) Ստուդիայից որպես հուշ մի լուսանկար ստացա:

(c) Ստուդիայից որպես հուշ հազվագյուտ մի լուսանկար ստացա:

(d) Ստուդիայից հազվագյուտ մի լուսանկար ստացա:

(iv) **The maid delivers the milk to every household.**

(a) Կթվորուհին կաթ է հասցնում յուրաքանչյուր ընտանիքի:

(b) Կթվորուհին ամեն օր պանիր է առաքում:

(c) Կթվորը ամեն օր իր խորթ դստեր հետ կաթ է առաքում:

(d) Կթվորուհին ամբողջ օրը կաթ է առաքում:

(v) **Yesterday after the programme, the actress and the singer were invited to dinner by the Mayor.**

(a) Երեկ միջոցառումից առաջ դերասանուհուն և երգչուհուն քաղաքապետը հրավիրել է ընթրիքի:

(b) Երեկ միջոցառումից հետո դերասանուհուն և երգչուհուն քաղաքապետը հրավիրել է զբոսանքի:

(c) Երեկ միջոցառումից հետո դերասանուհուն և երգչուհուն քաղաքապետը հրավիրել է ընթրիքի:

(d) Երեկ միջոցառումից հետո դերասանին և երգչուհուն քաղաքապետը հրավիրել է ընթրիքի:

(vi) **At the end of every year, my friend is transferred to a new office.**

(a) Ամեն տրվա վերջին ընկերոջս մեքենան փոխվում է:

(b) Ամեն տրվա վերջին ընկերոջս տեղափոխում են:

(c) Ամեն տարի ընկերոջս հասցեն փոխվում է:

(d) Ամեն տրվա վերջում ընկերոջս տեղափոխում են մի գրասենյակ:

(vii) **I do not speak German but I understand German and English.**

(a) Ոչ, ես գերմաներեն ընդհանրապես չեմ խոսում, բայց շատ լավ հասկանում եմ գերմաներեն և անգլերեն:

(b) Ես գերմաներեն չեմ խոսում, բայց հասկանում եմ գերմաներեն և անգլերեն:

(c) Չնայած ես գերմաներեն չեմ հասկանում, բայց շատ լավ խոսում ֆրանսերեն և անգլերեն:

(d) Այո, ես գերմաներեն չեմ խոսում, բայց հասկանում եմ գերմաներեն և անգլերեն:

(viii) **Usually, the villagers start field work in the spring season.**

(a) Սովորաբար գարնանը գյուղացիները սկսում են իրենց դաշտերը ջրել:

(b) Սովորաբար գարնանը բոլորը սկսում են դաշտային աշխատանքները:

(c) Սովորաբար գյուղացիները դաշտային աշխատանքները սկսում են գարնանը:

(d) Սովորաբար ամռանը գյուղացիները սկսում են դաշտային աշխատանքները:

Question 5 **[12]**

Translate the following passage from English to Armenian.

Տրված տեքստը անգլերենից թարգմանել հայերեն:

Social media has become an intrinsic part of our lives. It has made the world small by connecting all the communities across the globe. It differs from traditional media like newspapers and radio, in its reach and quality. It has become impossible to imagine our lives without it. Social media has provided a platform to people. Many social and political issues are voiced through this medium. It is a convenient way to spread awareness and sensitise the masses.

However, the extreme use of social media has exposed its disadvantages. Since it influences the masses, people form their opinion on the basis of what is popular on social media. It often spreads false news and creates panic among people. It is important to use social media responsibly and carefully. Social media can empower the modern society if used properly.

Question 6

Read the passage given below carefully and answer the questions that follow in Armenian.

Ուշադիր կարդացեք ստորև տրված հատվածը և պատասխանեք հայերենով հաջորդող հարցերին:

Դավիթ Անհաղթ

Աշխարհի տարբեր կողմերից Բյուզանդիա էին գալիս **նշանավոր** **իմաստուններ** և իմաստասերներ: Նրանք պիտի մրցեին և պատասխանեին բյուզանդացի գիտունների **բազում** հարցերին: Հայաստանից մրցույթին մասնակցում էր Դավիթ անունով մի իմաստասեր: Նա Մովսես Խորենացու քրոջ որդին էր:

Հերթով ներկայանում են իմաստունները: Նստում են սրահի **կենտրոնում** և պատասխանում մրցավեճի ղեկավարի հարցերին:

Հասավ Դավթի հերթը: Հնչեց առաջին հարցը: Հայ իմաստասերը **պերճ** հունարենով պատասխանեց հարցին: Այսպես չորս ժամ **անընդմեջ**: Աշխարհի տարբեր ծայրերից հավաքված իմաստունները հիանում էին հայ գիտունի պատասխաններով:

Վերջում ղեկավարն ասաց.

- Դավի՛թ Հայկազուն, դու **փայլեցիր** քո իմաստությամբ ու պերճախոսությամբ: Եթե դու պատասխանես վերջին հարցին, քեզ կօծենք մեծ իմաստասեր:

Ապա ղեկավարը մի պահ լռեց, զննեց Դավթին և հարցրեց.

- Ի՞նչն է, որից մարդ երբեք չի ձանձրանում:

- Հա՛ցը, - արագորեն ասաց Դավիթը, - ամեն տեսակ ուտելիք, որքան էլ **համեղ** լինի, կարող է **ձանձրացնել** մարդուն, իսկ հացը՝ երբեք: Ինչ էլ ուտես, առանց հացի չես կշտանա:

- Նա ամիաղթ է, նա **անհաղթ** է, - բացականչեցին հիացած իմաստունները, և բոլորը ոտքի կանգնած պատիվներ մատուցեցին հայ գիտունին:

- Այո՛, իսկական Դավիթ Անհաղթ, - հիացմունքով եզրակացրեց մրցավեճի ղեկավարը:

(i) Որտե՞ղ էին հավաքվել իմաստուններն ու իմաստասերները: [5]

(ii) Հայաստանից ո՞վ էր մասնակցում այդ մրցույթին: [5]

(iii) Գրել վերջին հարցը և Դավթի պատասխանը: [5]

(iv) Գրել ընդգծված բառերի հոմանիշները: [5]